# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**«Մայրենի», «Հայրենագիտություն», «Այլընտրանքային հաղորդակցում» առարկաների մեթոդական միավորման նիստի**

Նիստը կայացել է 2026 թվականի սեպտեմբերի 4-ին: Մասնակցողների թիվը՝ 6:
Մասնակցողների անուն, ազգանուն՝

1. Համեստ Փիրումյան
2. Անի Օհանյան
3. Բասիկ Խուբլարյան
4. Ռուզաննա Բաղդասարյան
5. Լիլի Ալեքսանյան
6. Աննա Աբրահամյան

**Օրակարգում՝**

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):
2. Նախորդ մեթոդական միավորման նիստի որոշումների կատարման վերաբերյալ քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):
3. Ուսումնական պլանով առարկային հատկացված ժամաքանակի և առարկայական ծրագրի հիման վրա ՄՄ անդամ ուսուցիչների կողմից առարկաների թեմատիկ պլանների մշակման և մեթոդական միավորման նիստում հավանության արժանանալուց հետո ԴԿՏՀ համակարգում լրացման հարցը (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան):
4. ՄՄ անդամ ուսուցիչների կողմից մշակված ուսումնական նախագծի պլանի քննարկման, դրական եզրակացության դեպքում՝ տնօրենի հաստատմանը ներկայացնելու, իսկ մերժման դեպքում՝ պատճառների ներկայացման հարցը (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան):
5. Անկախության օրվան նվիրված միջոցառման կազմակերպում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):

**ԼՍԵՑԻՆ 1**

Մեթոդական միավորման ղեկավար Հ. Փիրումյան ներկայացրեց 2026 թվականի սեպտեմբերի 4-ին նախատեսված մեթոդական միավորման նիստի օրակարգի նախագիծը՝ ներառված երեք հարցերով, զեկուցողներով և քննարկման հիմնական ուղղություններով:

Նշվեց, որ օրակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքային խնդիրները: Ընդգծվեց, որ օրակարգում ընդգրկված հարցերն ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, մեթոդական աշխատանքների համակարգմանը և առաջադրված խնդիրների համատեղ քննարկմանը:

**ԼՍԵՑԻՆ 2**

ՄՄ ղեկավարը ներկայացրեց նախորդ նիստում կայացված որոշումների կատարման ընթացքը՝ նշելով, որ նախատեսված աշխատանքներն իրականացվել են սահմանված ժամկետներում:

ՄՄ քարտուղար Ա. Օհանյանը տեղեկացրեց, որ նիստի արձանագրությունը կազմվել և էլեկտրոնային եղանակով ներկայացվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Հ.Փիրումյանն անդրադարձ կատարվեց իրավական ակտերի և ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթերի պահանջների կատարմանը: Նշվեց, որ ուսուցիչները ծանոթացել են փաստաթղթերին և աշխատանքը կազմակերպում են դրանց պահանջներին համապատասխան: Ներկայացվեց փոխադարձ դասալսումների, դասաժամերի նախնական բաշխման, դասի պլանի միասնական ձևաչափի կիրառման և սովորողների գնահատման գործընթացը: Նշվեց, որ վերոնշյալ հարցերի վերաբերյալ ՄՄ առաջարկությունները ներկայացվել և հավանության են արժանացել սեպտեմբերի 1-ի ՄԽ նիստում: ՄՄ

ղեկավարը տեղեկացրեց նաև, որ պատշաճ կերպով իրականացվել են նախագծային ուսուցման իրականացման նախապատրաստական աշխատանքները:

**ԼՍԵՑԻՆ 3**

Մեթոդական միավորման ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց առարկայական թեմատիկ պլանների մշակման, քննարկման և ԴԿՏՀ համակարգում մուտքագրման ընթացքը: Նշվեց, որ թեմատիկ պլանները մշակվել են ուսումնական պլանով առարկաներին հատկացված ժամաքանակի և առարկայական ծրագրերի պահանջների հիման վրա՝ ապահովելով դրանց համապատասխանությունն ու միասնական ձևավորումը:

Մեթոդական միավորման նիստում քննարկվեցին ուսուցիչների կողմից ներկայացված թեմատիկ պլանները: Քննարկման ընթացքում տրվեցին առաջարկություններ թեմաների հաջորդականության, ժամաբաշխման և վերջնարդյունքների հստակեցման վերաբերյալ, որոնց հիման վրա պլանները լրամշակվեցին և վերջնականացվեցին:

Մասնախմբի ղեկավարը հիշեցրեց, վերջնականացված թեմատիկ պլաններն անհրաժեշտ է լինելու ներբեռնել ԴԿՏՀ նոր համակարգում՝ տվյալ պատուհանի գործարկումից հետո:

**ԼՍԵՑԻՆ 4**

ՄՄ ղեկավարը տեղեկացրեց, որ 2026–2027 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացվելու է օգոստոսի 27-ի նիստում հավանության արժանացած նախագծային աշխատանքներից 4-ը.

| ՀՀ | Ուսուցչի անուն, ազգանուն | Դասարան | Նախագծի անվանումը |
|---|---|---|---|
| 1 | Բասիկ Խուբլարյան | 7$^{Ա}$ (1-ին կիսամյակ) | Տառերի կախարդական աշխարհը |
| 2 | Ռուզաննա Բաղդասարյան | 7$^{Գ}$ (1-ին կիսամյակ) | Հայ մշակույթի ոսկեդարը |
| 3 | Համեստ Փիրումյան | 8$^{Բ}$ (1-ին կիսամյակ) | Բառ և բառակապակցություն |
| 4 | Ռուզաննա Բաղդասարյան | 9$^{Ա}$ (1-ին կիսամյակ) | Շիրակի մարզ |

Ներկայացված նախագծերի իրականացման համար անհրաժեշտ էր մշակել և ներկայացնել համապատասխան պլաններ:

Քննարկվեցին ներկայացված նախագծերի պլանները, սովորողների ներգրավվածության նախատեսվող մակարդակը, աշխատանքների կազմակերպման ձևերն ու գնահատման չափանիշները: ՄՄ անդամների կողմից ներկայացվեցին առաջարկություններ և դիտարկումներ: Քննարկման արդյունքում նախագծերի պլանները լրամշակվեցին և վերջնականացվեցին:

**ԼՍԵՑԻՆ 5**

ՄՄ անդամները քննարկեցին ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառման կազմակերպման հարցը: Ներկայացվեց միջոցառման նպատակը, բովանդակությունը և անցկացման ձևաչափը: Կարևորվեց սովորողների ակտիվ մասնակցությունը՝ հաշվի առնելով նրանց անհատական կարողություններն ու առանձնահատկությունները:

**Լսելով 2026 թվականի սեպտեմբերի 4-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հաստատել մեթոդական միավորման նիստի՝ 5 հարցից բաղկացած օրակարգը: Նիստն անցկացնել հաստատված օրակարգին համապատասխան: Ապահովել օրակարգային հարցերի քննարկումն ու ընդունված որոշումների իրականացումը սահմանված ժամկետներում: Կատարման ընթացքի վերահսկողությունը վերապահել մեթոդական միավորման ղեկավարին:
2. Նախորդ՝ 2026 թվականի օգոստոսի 27-ի նիստի որոշումների կատարման աշխատանքները համարել իրականացված սահմանված ժամկետներում: Ընդունել ի գիտություն, որ որոշումների կատարման

շրջանակում մանկավարժական խորհրդի նիստում ներկայացվել և հավանության են արժանացել նախնական դասաբաշխման, սովորողների գնահատման, դասալսումների կազմակերպման և դասի պլանի մշակման վերաբերյալ ՄՄ առաջարկությունները: ՄՄ անդամ ուսուցիչներն ուսումնասիրել են կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը և աշխատանքը կազմակերպել դրանց պահանջներին համապատասխան: Նախատեսված նախագծային աշխատանքների իրականացման ուղղությամբ կատարվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները, իսկ նիստի արձանագրությունը կազմվել և ներկայացվել է սահմանված ժամկետում:

3. Հավանություն տալ մեթոդական միավորման անդամ ուսուցիչների կողմից մշակված, քննարկման արդյունքում լրամշակված և վերջնականացված առարկայական թեմատիկ պլաններին՝ Հիմք ընդունելով ՄՄ անդամների ներկայացրած առաջարկությունները և ղեկավարվելով ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանով հաստատված Հավելված N 2-ի 12-րդ կետի պահանջներով՝
4. ՄՄ անդամ ուսուցիչներին հանձնարարել վերջնականացված թեմատիկ պլանները ԴԿՏՀ նոր համակարգում մուտքագրել սահմանված ձևաչափով՝ համապատասխան պատուհանի գործարկումից հետո:
5. Հիմք ընդունելով քննարկման արդյունքները՝ դրական եզրակացություն տալ 2026–2027 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացվելիք նախագծային աշխատանքների վերջնականացված պլաններին և դրանք ներկայացնել հաստատության տնօրենի հաստատմանը:
6. ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառումը կազմակերպել և անցկացնել սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով սովորողների կրթական առանձնահատկությունները և հնարավորությունները: Միջոցառման նախապատրաստական աշխատանքները հանձնարարել Ռուզաննա Բաղդասարյանին:

**Առարկայական մասնախմբի ղեկավար՝** _____ **Հ. Փիրումյան**

**Քարտուղար՝** _____ **Ա. Օհանյան**

**07.09.2026**